

Հավելված  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2019 թվականի ապրիլի 8-ի  
N°84L որոշմամբ

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Երեւան 2019**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ .....</b>	<b>3</b>
1. Իրավական ոլորտի բարեփոխումներ եւ իրավական գործառույթներ.....	5
2. Սակագնային քաղաքականություն.....	10
3. Լիցենզավորում եւ լիցենզավորված անձանց միջեւ կնքված պայմանագրեր...	16
4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ.....	17
<i>4.1. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ.....</i>	<i>17</i>
<i>4.1.1. Էներգետիկայի բնագավառ.....</i>	<i>18</i>
<i>4.1.2. Ջրային ոլորտ.....</i>	<i>20</i>
<i>4.2. Սպառողների դիմումների քննարկում.....</i>	<i>20</i>
5. Էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում եւ գնումների մոնիթորինգ .....	23
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.....	26
7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ.....	27
8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը, համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների եւ հասարակական կազմակերպությունների հետ.....	33
9. Միջազգային համագործակցություն .....	35
10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը .....	38

## Նախարան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում եւ ջրային ոլորտում (ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դեպքում՝ միայն սակագների մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման եւ վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետեւ՝ հանձնաժողով) 2018 թվականին գործել է հետեւյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ (մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը),  
Միքայել Սողոմոնյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Մուշեղ Կոչեցյան՝ հանձնաժողովի անդամ,

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ,

Արմեն Բաղդասարյան՝ հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական եւ լիցենզավորման վարչություն՝
  - իրավաբանական եւ դատական սպասարկման բաժին,
  - լիցենզավորման բաժին,
- զարգացման եւ մոնիթորինգի վարչություն՝
  - տեխնիկական բաժին,
  - տնտեսագիտական բաժին,

- հեռահաղորդակցության վարչություն`
- կարգավորման քաղաքականության բաժին,
- ռեսուրսների կառավարման եւ տեխնոլոգիական զարգացման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- միջազգային համագործակցության բաժին,
- դիմումների քննարկման բաժին,
- նիստերի կազմակերպման բաժին,
- գնումների բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման եւ սոցիալական ծրագրերի իրականացման բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի գլխավոր քարտուղարը:

## 1. Իրավական ոլորտի բարեփոխումներ եւ իրավական գործառույթներ

Հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից մեկը կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումն է եւ միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի եւ առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների եւ կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման ու կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից եւ հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Կարելորելով էլեկտրաէներգետիկական համակարգի շուկայի աստիճանական ազատականացման, միջպետական առևտրի խթանման անհրաժեշտությունը եւ հաշվի առնելով միջազգային կառույցների առաջարկությունները, 2017 թվականի ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության հետ համատեղ մշակվել եւ 2018 թվականի փետրվարի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը ուժի մեջ է մտել 2018 թվականի հուլիսի 1-ից: Օրենքի հիմնական նպատակը միջազգային առաջավոր փորձին համապատասխան էլեկտրաէներգետիկական շուկայի առավել արդյունավետ աշխատանքին ուղղված կարգավորման նոր գործիքների ներդրումն է: Մասնավորապես, Օրենքով նախատեսվող փոփոխություններն ուղղված են ներքին շուկայի սպառողների եւ կարգավորվող անձանց շահերի հավասարակշռմանը, սակագների կառուցվածքի բարելավմանը, արտադրության, սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրմանն ու համակարգում առկա այլ խնդիրների առաջադեմ եւ արդյունավետ լուծման ապահովմանը:

2018 թվականի հուլիսին հանձնաժողովը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի եւ էլեկտրական էներգիայի առևտրի մեխանիզմների հայեցակարգին, որով նախադրյալներ են ստեղծվում էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումների իրականացման համար:

Օրենքի շրջանակում եւ ի կատարումն հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագրի համապատասխան կետերի՝ 2018 թվականի ընթացքում՝

- 1) վերանայվել են էներգետիկայի բնագավառում գործունեության թվով մոտ 250 լիցենզիաների պայմանները՝ դրանք համապատասխանեցնելով «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ մշակելով եւ հրապարակելով նաեւ նշված օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակների համար լիցենզիաների պայմանների օրինակելի ձեւեր.
- 2) համապատասխան փոփոխություններ են կատարվել էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտերում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առեւտրային կանոններում, Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններում, հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական շուկայում լիցենզավորված անձանց միջեւ կնքվող պայմանագրերի օրինակելի ձեւերում եւ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում, որոնցով մինչեւ էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջական կանոնների ընդունումն ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ դաշտ է ստեղծվել շուկայի նոր մասնակիցների լիցենզիա ստանալու, շուկա մուտք գործելու եւ գործունեություն ծավալելու համար: Ինչպես նաեւ հաշվի առնելով, որ Օրենքի համաձայն էլեկտրական էներգիայի ներկրումը եւ արտահանումը այսուհետ իրականացվելու է առանց ներկրման կամ արտահանման լիցենզիա ստանալու, էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգից հանվել են նաեւ դրանց վերաբերյալ կարգավորումները: Միեւնույն ժամանակ, մեկ միասնական կարգում են ներառվել բնական գազի ներկրման եւ արտահանման գործունեության լիցենզավորման գործընթացները (հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 21-ի №429Ն եւ դեկտեմբերի 12-ի №455Ն որոշումներ):
- 3) սահմանվել է բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման եւ էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող մինչեւ 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող-բաշխող (երաշխավորված մատակարար)) պայմանագրի օրինակելի ձեւը (հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի №456Ն որոշում), որով բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման, ինչպես նաեւ էլեկտրական էներգիայի առուվաճառքի հետ կապված հարաբերությունները ներառվել են մեկ միասնական պայմանագրում՝ արդյունավետ լուծումներ

ամրագրելով կիրառական, ինչպես նաև պայմանագրային կողմերի ռիսկերի հավասարաչափ բաշխման եւ փոխադարձ պատասխանատվության հստակ մեխանիզմների ապահովման առումով:

Նպատակ ունենալով բարելավել նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացը՝ հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 2-ի №139Ն եւ №140Ն որոշումներով փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել 2017 թվականի մայիսի 31-ի «Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձեւերը սահմանելու եւ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №218Ն եւ 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշումներում, ինչի արդյունքում՝ հերթական անգամ կրճատվել են նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու սահմանված գործընթացների թիվը եւ միացման ժամկետները: Սասնավորապես, սահմանվել են պարզեցված միացման դեպքերը, երբ դիմումն ստանալուց հետո անմիջապես դիմող անձին ներկայացվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եւ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ՝ մատակարարի կողմից ստորագրված պայմանագրի 2 օրինակի հետ միասին: Կրճատվել են նաև 0.22 կՎ լարմամբ ոչ պարզեցված միացման դեպքերում էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ 45 աշխատանքային օրվա փոխարեն սահմանելով 50 օրացուցային օր:

Նշված փոփոխությունների արդյունքում Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Գործարարությանը զբաղվելը 2019» զեկույցի համաձայն «Էլեկտրականության միացում» ցուցիչի մասով Հայաստանի Հանրապետության դիրքը բարելավվել է 49 կետով՝ 66-ից բարձրանալով 17-րդ հորիզոնականը:

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության առաջարկությամբ եւ հանձնաժողովի հետ համատեղ քննարկումների արդյունքներով ընդունվել են մի շարք որոշումներ, որոնցով սահմանվել են վերականգնվող էներգետիկայի ոլորտում, մասնավորապես, արեւային եւ հողմային էլեկտրակայանների կառուցման եւ շահագործման նպատակով լիցենզիաների տրամադրման եւ սակագնային քաղաքականության իրականացման հիմնական կարգավորումները՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի զարգացմանը եւ

հնարավորություն ընձեռելով ներդրողներին ակտիվորեն ներգրավել համապատասխան ներդրումային նախագծերին: Մասնավորապես, սահմանվել է, որ`

- 1) մինչև 5 ՄՎտ հզորությամբ արելային էլեկտրակայանների կառուցման եւ շահագործման նպատակով կտրամադրվեն համապատասխան լիցենզիաներ` 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում գումարային 100 ՄՎտ հզորության, այդ թվում` 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար` առավելագույնը 50 ՄՎտ հզորության շրջանակում.
- 2) հողմային էլեկտրակայանների կառուցման եւ շահագործման նպատակով արդեն իսկ տրամադրված լիցենզիաների մասով 2018 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ գումարային հզորության սահմանափակում ամրագրվել է 8,5 ՄՎտ-ը, իսկ 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար լիցենզիաները կտրամադրվեն առանց գումարային հզորության սահմանափակման` մինչև 30 ՄՎտ հզորությամբ կայանների համար.
- 3) 5 ՄՎտ-ը գերազանցող հզորությամբ արելային եւ 30 ՄՎտ-ը գերազանցող հողմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները կտրամադրվեն պետություն-մասնավոր գործընկերություն գործարքների շրջանակում.
- 4) մինչև 2020 թվականի հունվարի 1-ը վերականգնվող էներգետիկ այլ ռեսուրսներ (կենսաբանական զանգված) օգտագործող էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները կտրամադրվեն առանց գումարային հզորության սահմանափակման:

Վերը շարադրվածով պայմանավորված` համապատասխան փոփոխություններ են կատարվել նշված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայում եւ սակագները սահմանող իրավական ակտում, որոնց համաձայն 2018 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած` մինչև 5 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն ունեցող արելային եւ մինչև 30 ՄՎտ (ներառյալ) տեղակայված հզորություն ունեցող հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները կսահմանվեն կայանների կառուցումն ավարտվելու եւ սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումը`

- 1) մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում ընդունվելու դեպքում` բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր



հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը հավասար (ներկայումս՝ 23.864 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի),

- 2) 2021 թվականի հունվարի 1-ից հետո ընդունվելու դեպքում՝ 2020 թվականի հունվարի 1-ից հետո տվյալ տեսակի կայանի լիցենզիա ստացող անձանց համար սահմանված սակագնային կարգավորման համաձայն:

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» №ՅՕ-261-Ն եւ «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» №ՅՕ-262-Ն օրենքների հիման վրա լրամշակվել են վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության միջեւ իրականացվող էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում հատուցում տրամադրելու կարգը եւ էլեկտրական էներգիայի մատակարարման եւ հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձեւը:

Նոր կարգավորմամբ նախատեսվել է էլեկտրական էներգիայի փոխհոսքերի շրջանակում հատուցման ոչ ենթակա էլեկտրաէներգիայի ծավալը հաշվարկել տարեկան արդյունքներով՝ գործող կարգավորումներով սահմանված ամսական հաշվարկների փոխարեն: Վերը նշված օրենքների գործողությամբ պայմանավորված՝ լրամշակվել են նաեւ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի գործընթացի շրջանակում հատուցման գումարի չափի հաշվարկման մեխանիզմները:

Բացի այդ, հաշվի առնելով «էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» №ՅՕ-262-Ն օրենքի այն դրույթը, համաձայն որի՝ մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը արեւային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորությունը կարող է հասնել էլեկտրական էներգիայի իրենց սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությանը, բայց ոչ ավելի, քան 500 կՎտ, որոնց գործունեությունը կարգավորման ենթակա չէ կառուցման եւ արտադրության ժամանակահատվածներում, համապատասխան փոփոխություն է կատարվել նաեւ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում:

Վերը նշված փոփոխություններն էապես նպաստում են ինքնավար էներգաարտադրող հանդիսացող էլեկտրական էներգիա սպառողների քանակի ավելացմանը եւ սպառման ռեժիմների բարելավմանը:

## 2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների եւ կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման եւ հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2019 թվականի փետրվարի 1-ից մինչև 2020 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության, ներկրման, արտահանման եւ սպառման հաշվեկշիռը, 2018 թվականին իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությունը եւ ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխությունները, հանձնաժողովը վերահաշվարկել է արտադրող խոշոր կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագները, «Բարձրավոլտ էլեկտրաջանցներ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի եւ «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման վճարները (սակագները), որոնք ուժի մեջ են մտել 2019 թվականի փետրվարի 1-ից:

Նշված գործընթացի շրջանակում, ելնելով գործող իրավակարգավորումներից, վերանայվել են նաև «Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի եւ «Հայրուսկոզենարացիա» ՓԲԸ-ի «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կոգեներացիոն կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Միեւնույն ժամանակ, վերանայվել են բաշխման ցանցին 110 կՎ, 35 կՎ եւ 6(10) կՎ լարումներով միացումների համար էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ուղղված աշխատանքների շրջանակում նախատեսվող կարգավորման նոր գործիքների ներդրմամբ պայմանավորված՝ սահմանվել է նաև բաշխման ցանցին 0.38(0.22) կՎ լարմամբ միացման համար էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագինը: Նշված սակագներն ուժի մեջ են մտել 2019 թվականի փետրվարի 1-ից:

Արդյունքում, էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների նշված վերանայման գործընթացի շրջանակում, բոլոր գործոններով պայմանավորված, էլեկտրաէներգետիկական համակարգում ձեւավորվել էր շուրջ 1.6 միլիարդ դրամ դրական արդյունք, որը հնարավորություն էր տալիս բոլոր սպառողների համար էլեկտրական էներգիայի սակագները նվազեցնել 0.37 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ավելացված արժեքի հարկը) կամ միայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար՝ 10.01 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ավելացված արժեքի հարկը): Հաշվի առնելով սոցիալապես անապահով ընտանիքների համար էլեկտրական էներգիայի սակագների էական նվազեցման հանգամանքը, ինչպես նաև նշված հարցը քննարկելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության հետ, համակարգում ձեւավորված ընդհանուր դրական արդյունքն ուղղվել է միայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների նվազմանը՝ 10.01 դրամ/կՎտժ-ով (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որն ուժի մեջ է մտել 2019 թվականի փետրվարի 1-ից: Մյուս բոլոր սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները մնացել են անփոփոխ: էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վերանայման գործընթացի մանրամասները ներկայացված են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ([http://psrc.am/images/docs/monitoring/electric/2019/ENERGY\\_SYSTEM-2019-20.pdf](http://psrc.am/images/docs/monitoring/electric/2019/ENERGY_SYSTEM-2019-20.pdf)):

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա, ըստ գործող կարգի, սահմանվել են 5 (այդ թվում՝ 4-ը նորակառույց եւ մեկը գործող կայան, որը վերակազմակերպման արդյունքում անցել է նոր ստեղծված ընկերությանը) փոքր հիդրոէլեկտրակայաններից, 8 նորակառույց արեւային էլեկտրակայաններից եւ վերանայվել 4 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները: Նշված բոլոր կայանները գործում են հաստատուն (\$իքսված) սակագնային համակարգում:

Ելնելով սղաճի եւ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Միեւնույն ժամանակ, վերահաշվարկվել եւ 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ են մտել 3 հողմային էլեկտրակայաններից, 3 արեւային էլեկտրակայաններից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից եւ 172 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել եւ հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացված 2019 թվականի պայմանագրային եւ տնօրինելի հզորությունների չափաքանակները:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, համաձայն իրեն տրամադրված լիցենզիայի պայմանների, 2018 թվականի օգոստոսին հայտ էր ներկայացրել հանձնաժողով՝ ճշգրտելու խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները:

Ընդ որում, նշված հայտի ներկայացումը պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից «Երեւան ջուր», «Հայջրնուկոյուլդի», «Լոռի-ջրնուկոյուլդի», «Շիրակ-ջրնուկոյուլդի» եւ «Նոր ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի եւ այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու նպատակով անցկացված մրցույթի համար նախանշված եւ համապատասխան փաստաթղթերում ամրագրված պայմաններով: Սասնավորապես, ՀՀ կառավարության կազմակերպած մրցույթի արդյունքում ձեւավորվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 15 տարվա բազիսային սակագները, «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության, նրա կողմից հիմնադրված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի եւ ՀՀ կառավարության միջեւ 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքվել է վարձակալության պայմանագիր: Այնուհետեւ, հաշվի առնելով մրցույթի արդյունքում վարձակալության 15 տարիների համար ձեւավորված խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) բազիսային սակագները եւ նշված վարձակալության պայմանագրի համապատասխան դրույթը, հանձնաժողովը 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ հաստատել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանները՝ նրանում նույնությամբ ամրագրելով մրցույթի արդյունքում ձեւավորված 15 տարիների բազիսային սակագները եւ մրցակցային փաթեթում ներառված սակագների ճշգրտման մեխանիզմները: Համաձայն սակագների ճշգրտման մեխանիզմների՝ վարձակալության պայմանագրի 2-րդ տարվանից սկսած՝ սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են պարտադիր ճշգրտման՝ հաշվի առնելով մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխությունը, սղաճը եւ ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը, ինչպես նաեւ ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից եւ խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցումը:

Վերը նշված իրավակարգավորումները եւ բազիսային սակագնի ճշգրտման գործոնները հիմք են հանդիսացել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտ ներկայացնելու համար: Նշված հայտի ուսումնասիրության շրջանակում ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիության ստուգման նպատակով հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի եւ սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացրել է մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ՝ ոչ բնակիչ-բաժանորդների մասով եւ երկու փուլով՝ Երեւան քաղաքի սպասարկման եւ մարզերի սպասարկման տարածքներում: Մոնիթորինգի իրականացման նպատակով, նախ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից պահանջվել եւ ստացվել է ոչ բնակիչ-բաժանորդների տվյալների բազան, որը ենթարկվել է համապատասխան վերլուծության՝ օգտագործելով նաեւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ներից եւ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունները: Վերլուծության արդյունքում կազմվել է առավել խնդրահարույց սպառողների ցանկը, որոնց մոտ մոնիթորինգ իրականացնելու նպատակով ձեւավորվել են 14 աշխատանքային խմբեր: Նշված աշխատանքային խմբերը 2018 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ 20-ը այցելությունների ընթացքում տեղերում գրանցել են ջրաչափերի ցուցմունքները, ստուգել դրանց աշխատանքը, կնիքների առկայությունը, խողովակների միացումները, հնարավոր շրջանցման դեպքերը եւ այդ ամենը լուսանկարել: Մոնիթորինգի արդյունքում գրանցված տվյալները եւ լուսանկարները յուրաքանչյուր օրվա ավարտին ներկայացվել են հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանում, տվյալները մուտքագրվել են համակարգչում, վերլուծվել եւ խախտման դեպքերի մասով հաշվարկվել լրացուցիչ ծավալներ: Ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են գրոյական սպառում ունեցող սպառողների մոտ՝ մոնիթորինգի արդյունքում գրանցված ու ընկերության բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ, եւ ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության ու այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1.5 մ/վրկ արագությամբ եւ ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով՝ 90 օրվա համար: Մոնիթորինգի ժամանակ իրականացվել է շուրջ 2680 այց (Երեւան քաղաքի սպասարկման տարածքում՝ շուրջ 1480 եւ մարզերի սպասարկման տարածքում՝ շուրջ 1200), հայտնաբերվել է 145 խախտման դեպք (Երեւան քաղաքում՝ 70, մարզերում՝ 75), որի հետեւանքով լրացուցիչ հաշվարկվել է 1.58 միլիոն

խորանարդ մետր ծավալ: Բացի այդ, ջրամատակարարման փաստացի ծավալների համար հայտով ներկայացված 2017 թվականի հուլիս 1-ից մինչև 2018 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի փոխարեն հանձնաժողովը հաշվարկներում հիմք է ընդունել 2017 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածը, որով պայմանավորված՝ ձեւավորվել է եւս 1.25 միլիոն խորանարդ մետր ծավալ: Արդյունքում՝ մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալը սակագների հաշվարկներում ճշգրտվել է ավելացվել է 2.83 միլիոն խորանարդ մետրով: Բացի այդ, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններում կատարված փոփոխության՝ բազիսային սակագների ճշգրտման ժամանակ հաշվի է առնվել նաեւ ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց եւ խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացված լրացուցիչ հասույթը: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից՝ վարձակալության 3-րդ պայմանագրային տարվա (2019 թվական) համար «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների գումարային մեծությունը հաշվարկվել է 202.272 դրամ/խմ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որը 2018 թվականի համար սահմանված սակագնի գումարային մեծությունից ավելի է 10.858 դրամ/խմ-ով, իսկ բաժանորդների կողմից փաստացի վճարվող 180 դրամ/խմ սակագնից (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝ 22.272 դրամ/խմ-ով: Սակայն, նպատակ ունենալով խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների համար սպառողների կողմից վճարվող սակագների մեծությունը պահպանել նույն մակարդակին (180 դրամ/խմ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) եւ հաշվի առնելով, որ գործող սակագների (191,414 դրամ/խմ) եւ սպառողներին մատուցվող ծառայությունների սակագների տարբերության փոխհատուցումը սուբսիդիայի տեսքով ներառված է 2019 թվականի պետական բյուջեում, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարությունը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ քննարկումների արդյունքում ձեռք է բերել պայմանավորվածություն՝ այլընտրանքային ֆինանսավորման վերաբերյալ: Այդ նպատակով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի եւ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի միջև 2018 թվականի նոյեմբերի 26-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Արդյունքում, 2019 թվականի համար ճշգրտված մանրածախ գումարային սակագնի ավելացող մեծության (22,272 դրամ/խմ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը) մի մասը (10,858 դրամ/խմ), համաձայն ընկերության լիցենզիայի պայմանների, տեղափոխվել է 2025 թվական, իսկ մյուս մասը (11,414 դրամ/խմ)՝ սուբսիդավորվում է ՀՀ պետական

բյուջեից:

Միաժամանակ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայի պայմանների համաձայն, ճշգրտվել են ջրամատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին եւ ոչ առևտրային կազմակերպություններին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաեւ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագները:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման գործընթացի մանրամասները ներկայացված են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ([http://psrc.am/images/News/2018/Veolia\\_sakagin-2019\\_2.pdf](http://psrc.am/images/News/2018/Veolia_sakagin-2019_2.pdf)):

«ՎեՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մատուցվող սակագնային փաթեթների տեսականին ընդլայնելու եւ բաժանորդներին ընտրության ավելի մեծ հնարավորություն ընձեռելու, ինչպես նաեւ այդ ծառայությունների շուկայում մրցակցության զարգացմանը խթանելու նպատակով, հաշվետու տարում հանձնաժողովը հաստատել է «ՎեՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված հեռախոսակապի «Նախընտրելի», «Բիզնես 4900», «Բիզնես 6900» եւ «Բիզնես 9900» այլընտրանքային սակագնային փաթեթները, որոնք ընդլայնում են գործող սակագնային փաթեթների տեսականին եւ կարող են կիրառվել միայն բաժանորդի ցանկությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա: Դրանցով նախատեսվում է ամսական բաժանորդային վճարների դիմաց Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված եւ հանրային շարժական բջջային կապի ցանցեր զանգերի որոշակի չափաքանակների տրամադրում, փակ խմբի ներսում անսահմանափակ ներցանցային զանգերի չափաքանակներ, ինչպես նաեւ նշված չափաքանակները սպառելուց հետո դեպի Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված եւ շարժական բջջային կապի ցանցեր առավել նպաստավոր սակագներով զանգելու հնարավորություն:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել եւ հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար

վճարողների 2019 թվականի անվանական կազմը եւ, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույթաչափերը:

### 3. Լիցենզավորում եւ լիցենզավորված անձանց միջեւ կնքված պայմանագրեր

Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում տրամադրել է էլեկտրական էներգիայի արտադրության 15 լիցենզիա, որից հատկանշական են՝

- 1) «ԷֆԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված «Մասրիկ-1» 55 ՄՎտ հզորությամբ արեւային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիան:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության հայտարարած մրցույթի արդյունքում 2018 թվականի հուլիսի 18-ին ՀՀ կառավարության, «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Բի.Վի. (Fotowatio Renewable Ventures B.V.) (Նիդերլանդներ) – «ԷֆԵսԷԼ Սոլար» Էս. ԷԼ. (FSL Solar S.L.) (Իսպանիայի Թագավորություն) ընկերությունների կոնսորցիումի եւ նրա հիմնադրած «ԷֆԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության միջեւ կնքվել է Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արեւային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման եւ շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագիրը: Ընդ որում, մրցույթի արդյունքներով «ԷֆԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի բազիսային սակագինը կազմում է 0.0419 ԱՄՆ դոլար/կՎտժ (20.3դրամ/կՎտժ)՝ առանց ավելացված արժեքի հարկի:

- 2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հայտի հիման վրա ընկերությանը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիան՝ մինչեւ 2025 թվականի հուլիսի 1-ը գործողության ժամկետով.

- 3) «Էներգահիմպեքս» փակ բաժնետիրական ընկերության հայտի հիման վրա ընկերությանը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիան՝ մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը գործողության ժամկետով:

Քննարկվել են լիցենզիաների վերածեւակերպման՝ 8, լիցենզիաների



գործողության ժամկետների երկարաձգման՝ 9, արտադրության լիցենզիաներով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածների երկարաձգման՝ 26 եւ էլեկտրական էներգիայի արտադրության ժամանակահատվածի անցնելու 13 հայտեր: Ուժը կորցրած է ճանաչվել էներգետիկայի բնագավառի 7 լիցենզիա, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի ներկրման եւ արտահանման 5 լիցենզիա, հաշվի առնելով որ նշված գործունեությունները Օրենքի համաձայն այլեւս լիցենզավորման ենթակա չեն:

Հանձնաժողովի կողմից առեւտրային կանոններին համապատասխան փորձաքննություն է անցել եւ գրանցվել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջեւ կնքված 272 պայմանագիր:

#### **4. Սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ**

##### *4.1 Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ*

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների ապահովման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես եւ տեղում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ մշտապես բարձրացվում է իրականացվող մոնիթորինգի արդյունավետությունը: Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերություններից սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային պարբերականությամբ ստացված տեղեկատվության, ինչպես նաեւ սպառողների դիմում-բողոքների բնույթի եւ բովանդակության ուսումնասիրության հիման վրա մշտադիտարկման է ենթարկում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի եւ տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին եւ հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի եւ տևողության հաշվարկային ցուցանիշները,
- առեւտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա,

բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները եւ հաշվարկված տույժերը,

- էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից մատակարարման կանոններով սահմանված դրույթների խախտման համար բաժանորդներին վճարվող տույժերը,

- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման, ջրամատակարարման ցանցերին միացման գործընթացում սահմանված ժամկետների խախտումները եւ դրանց պատճառները:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվել եւ իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ խախտումները հետագայում բացառելու նպատակով: Նշենք, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.psrc.am/-am/-sectors/electric/service-quality-indicators>, <http://www.psrc.am/am/sectors/gas/service-quality-indicators>, <http://www.psrc.am/am/sectors/water/service-quality-indicators>):

2018 թվականին հանձնաժողովը իրականացրել է էլեկտրական էներգիա եւ բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից առետրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկների, ինչպես նաեւ խմելու ջուր մատակարարող ընկերության կողմից ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ ներկայացվող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է.

- ընկերություններում առկա է հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ.
- ընկերություններում տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացումը համապատասխանում է ընթացակարգին.
- սկզբնական փաստաթղթերում գրանցված տեղեկատվությունները բովանդակային առումով համապատասխանում են հանձնաժողով ներկայացված տեղեկատվություններին:

#### **4.1.1 էներգետիկայի բնագավառ**

2018 թվականին լրամշակվել են էլեկտրական էներգիայի մատակարարման եւ օգտագործման կանոնները, ըստ որոնց՝

- Սպառողին ներկայացվող վճարման փաստաթղթում ներառվել է սպառողի

համար ավելի ծավալուն տեղեկատվություն, որի շնորհիվ վերջինիս համար ավելի վերահսկելի կդառնա սպառված էլեկտրաէներգիայի քանակի եւ արժեքի չափը.

- Հստակեցվել է առեւտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքերում սպառողի կողմից ծախսված էլեկտրական էներգիայի վերահաշվարկի բանաձեւը, իսկ սպառված էլեկտրաէներգիայի արժեքի որոշումը կիրականացվի ավելի ճշգրիտ՝ տարանջատված ըստ ցերեկային եւ գիշերային սակագնի.
- Սպառողի հարմարավետության եւ սպառողին ամրակցված հաշվառքի սարքի աշխատանքի վերահսկման նպատակով, մատակարարը պարտավորեցվել է առեւտրային հաշվառքի սարքի ապահովաքակցումից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում սպառողին ներկայացնել չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության պատճենը.
- Հստակեցվել է մատակարարի կողմից սպառողին տույժ վճարելու կարգը, որի համաձայն մատակարարը պարտավորեցվել է սպառողին վճարել տույժ՝ կանոններով սահմանված պահանջների յուրաքանչյուր խախտման համար:

2018 թվականին լրանշակվել են նաեւ բնական գազի մատակարարման եւ օգտագործման կանոնները, ըստ որոնց՝

- Սահմանվել է դրույթ, ըստ որի՝ այն դեպքերում, երբ առեւտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման արձանագրություն չի կազմվել եւ բաժանորդը չի համաձայնում վճարել վերահաշվարկված բնական գազի համար, մատակարարը վեճը լուծում է դատական կարգով՝ մինչեւ վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով բաժանորդի գազամատակարարումը.
- Բաժանորդի սպասարկման որակի հետագա բարելավման նպատակով մատակարարը պարտավորեցվել է գազամատակարարման պլանային ընդհատումների մասին առնվազն 7 օր առաջ իր վեբ-կայքում հրապարակել նախնական տեղեկատվություն: Բացի այդ, մատակարարը պարտավորեցվել է նաեւ հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաալիքով 2 անգամ բաժանորդներին տեղեկացնել հաջորդ օրվա գազամատակարարման պլանային ընդհատումների եւ վերականգնման վերջնական ժամկետների մասին.
- Հստակեցվել է մատակարարի կողմից բաժանորդին տույժ վճարելու կարգը, որի համաձայն մատակարարը պարտավորեցվել է բաժանորդին վճարել տույժ՝ կանոններով սահմանված պահանջների յուրաքանչյուր խախտման համար:

#### **4.1.2 Զրային ոլորտ**

Հանձնաժողովը, խմելու ջրի ոլորտում ոչ բաժանորդների կողմից ապօրինի միացմամբ խմելու ջրի սպառում եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործում հայտնաբերելու դեպքում ծառայությունների մատուցումն անմիջապես չդադարեցնելու եւ նոր միացմամբ բաժանորդ դառնալու հնարավորություն ընձեռելու նպատակով, 2018 թվականի հուլիսին համապատասխան որոշմամբ փոփոխություններ եւ լրացումներ է կատարել հանձնաժողովի 2016 թվականին սահմանված խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններում, այդ թվում՝ սահմանվել է ժամանակավոր պայմանագրի օրինակելի ձեւ: Նշված կարգավորման արդյունքում, մինչեւ սահմանված կարգով նոր միացման ապահովումը, հնարավորություն է ընձեռվել մատակարարի եւ ապօրինի սպառում իրականացրած անձի միջեւ որոշակի պայմանների առկայության դեպքում սահմանված կարգով եւ ժամկետներում կնքել ծառայությունների մատուցման ժամանակավոր պայմանագիր:

Միաժամանակ, ելնելով բաժանորդներին առավել մանրամասն իրազեկելու անհրաժեշտությունից՝ վերը նշված որոշմամբ նախատեսվել է, որ 2019 թվականի հունվարի 1-ից բաժանորդին մատուցած ծառայությունների դիմաց տրվող վճարման փաստաթղթում, ըստ մատուցված ծառայությունների տեսակի, տարանջատված պետք է ներառել հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների սակագների, քանակների եւ դրանց դիմաց վճարման ենթակա գումարների, իսկ սուբսիդիայի առկայության դեպքում՝ նաեւ յուրաքանչյուր հաշվարկային ամսվա համար հաշվարկված սուբսիդիաների գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

2018 թվականին նշակվել են խմելու ջուր մատակարարող ընկերության կողմից բաժանորդներին վճարված տուժանքների, ինչպես նաեւ առեւտրային հաշվառքի սարքի խախտման համար կատարված վերահաշվարկների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ձեւերը:

#### **4.2 Սպառողների դիմումների քննարկում**

Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ հարաբերություններում բաժանորդների ունեցած խնդիրների կարգավորման կամ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում մատուցվող ծառայությունների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով 2018 թվականին կազմակերպություններից (նաեւ սպառողների շահերը պաշտպանող) եւ

Ֆիզիկական անձանցից ստացվել է 1679 դիմում, որոնցից 824-ը՝ գրավոր, 855-ը՝ բանավոր: Դիմումները քննարկվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում: Գրավոր դիմումներից 231-ը բավարարվել են, 208-ը մասամբ են բավարարվել, 16-ի դեպքում հանձնաժողովում հարուցված վարչական վարույթը կարճվել է, 75 դիմումների քննարկումը դուրս է հանձնաժողովի իրավասության շրջանակից, 11 դիմումի դեպքում տրվել է տեղեկատվություն, 283-ը՝ չի բավարարվել:

Բանավոր դիմումներից 374-ով բարձրացված խնդիրները բավարարվել են, 26 դիմումներով բարձրացված խնդիրները մասամբ են բավարարվել, 455 դիմումի դեպքում տրվել է տեղեկատվություն:

Հանձնաժողով ներկայացված 824 գրավոր դիմումից 170-ը վերաբերել է էլեկտրական էներգիայի, 71-ը՝ բնական գազի, 553-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, 29-ը՝ հեռահաղորդակցությանը եւ 1-ը՝ ջերմամատակարարման բնագավառներին, մասնավորապես.

- էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 170 դիմումներից 41-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 15-ը՝ էլեկտրամատակարարման ընդհատումներին, 12-ը՝ էլեկտրամատակարարման դադարեցմանը եւ վերականգնմանը, 33-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 17-ը՝ էլեկտրաէներգիայի որակին, 5-ը՝ կատարված վերահաշվարկին չհամաձայնելուն եւ 47-ը՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 71 դիմումներից 4-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 35-ը՝ սպառված բնական գազի վերահաշվարկին չհամաձայնելուն, 2-ը՝ գազամատակարարման դադարեցմանը, 5-ը՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը եւ 25-ը՝ այլ բնույթի,
- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 553 դիմումներից 328-ը վերաբերել են կատարված վերահաշվարկին չհամաձայնելուն, 38-ը՝ վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 27-ը՝ ջրամատակարարման գրաֆիկի խախտմանը, 12-ը՝ մատակարարվող խմելու ջրի ճնշմանը, 31-ը՝ ջրամատակարարման ցանցերի եւ կոյուղագծերի տեխնիկական վիճակին, 46-ը՝ նոր բաժանորդ գրանցվելուն եւ 71-ը՝ այլ բնույթի,
- հեռահաղորդակցությանն առնչվող 29 դիմումներից 13-ը վերաբերել են վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 1-ը՝ կատարված վերահաշվարկին չհամաձայնելուն եւ 15-ը՝ այլ բնույթի: Ներկայացված վճարման հաշիվներին դիմումատուների անհամաձայնությունը հիմնականում վերաբերել է պայմանագրային հարաբերություններին, որոնց կարգավորումը սահմանված է նույն պայմանագրերով:

Հանձնաժողովում գործող թեժ գծի հեռախոսահամարով, ինչպես նաև հանձնաժողով այցելելով, անհատները եւ կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավուքների եւ պարտականությունների, դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի եւ գործողությունների վերաբերյալ: Բանավոր ներկայացված 855 դիմումից 278-ը վերաբերել են էլեկտրական էներգիայի մատակարարմանը, 85-ը՝ բնական գազի մատակարարմանը, 462-ը՝ խմելու ջրի մատակարարմանը, 28-ը՝ հեռահաղորդակցության եւ 2-ը փոստային կապի բնագավառներին, մասնավորապես.

- էլեկտրական էներգիայի մատակարարմանն առնչվող 278 դիմումներից 33-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 24-ը՝ էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումներին, 40-ը՝ էլեկտրամատակարարման դադարեցմանը եւ վերականգնմանը, 43-ը՝ նոր սպառող գրանցվելու ընթացակարգին, 20-ը՝ էլեկտրաէներգիայի որակին, 5-ը՝ կատարված վերահաշվարկին չհամաձայնելուն եւ 113-ը՝ այլ բնույթի,
- բնական գազի մատակարարմանն առնչվող 85 դիմումներից 3-ը վերաբերել են ներկայացված վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 12-ը՝ սպառված բնական գազի վերահաշվարկին չհամաձայնելուն, 9-ը՝ գազամատակարարման դադարեցմանը, 14-ը՝ ներտնային տեխնիկական սպասարկմանը եւ 47-ը՝ այլ բնույթի,
- խմելու ջրի մատակարարմանն առնչվող 462 դիմումներից 107-ը վերաբերել են կատարված վերահաշվարկին չհամաձայնելուն, 34-ը՝ վճարման հաշիվներին չհամաձայնելուն, 68-ը՝ ջրամատակարարման գրաֆիկների խախտմանը, 27-ը՝ մատակարարվող խմելու ջրի ճնշմանը, 65-ը՝ ջրամատակարարման ցանցերի եւ կոյուղագծերի տեխնիկական վիճակին, 39-ը՝ նոր բաժանորդ գրանցվելուն, 4-ը՝ խմելու ջրի որակին եւ 118-ը՝ այլ բնույթի,
- հեռահաղորդակցությանն առնչվող 28 դիմումներից 5-ը վերաբերել են վճարման հաշիվներին չհամաձայնելուն եւ 23-ը՝ այլ բնույթի:

Գրավոր եւ բանավոր ներկայացված 2018 թվականի դիմում-բողոքների առարկայի ծագման իրավական կամ կազմակերպական պատճառների եւ մատակարարների ներկայացրած եռամսյակային հաշվետվությունների վերլուծությունների արդյունքները հաշվի են առնվել էլեկտրական էներգիայի, բնական գազի մատակարարման եւ օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակման ընթացքում:

2018 թվականի արդյունքներով հանձնաժողով ներկայացված դիմումների

քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան տեղեկատվությունը հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Սպառողը հնարավորություն է ունեցել նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Տեղեկատվություն սպառողին» եւ «Հարց ու պատասխան» բաժիններից, իսկ «Հետեւել դիմումի ընթացքին» բաժնում համապատասխան տեղեկատվություն ներբեռնելու միջոցով դիմումատուն հնարավորություն է ունեցել հետեւելու իր դիմումի քննարկման ընթացքին:

Սպառողի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով պարբերաբար թարմացվում են դիմումատուի կողմից հաճախակի տրվող հարցերը հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի «Հարց ու պատասխան» բաժնում: Բացի այդ, թարմացվել է բաժանորդի կողմից հաճախակի տրվող հարցերի եւ պատասխանների հարցաշարը, պատրաստվել է խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասին 2018 թվականի տարեկան տեղեկատվությունը, որոնք եւս հրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Էլեկտրական էներգիա, բնական գազ եւ խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումների սահմանված կարգով եւ ժամկետներում քննարկումը սպառողների սպասարկման որակի ցուցանիշ է եւ մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից: Ընկերությունների 2018 թվականի եռամսյակային կտրվածքով ներկայացրած տեղեկատվությունը ուսումնասիրվել է, որի արդյունքներն ամփոփվելուց հետո, հանրությանն իրազեկելու նպատակով, հրապարակվել է հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում ծառայությունների մատուցմանն առնչվող գրավոր եւ բանավոր ներկայացված դիմումների սահմանված կարգով եւ ժամկետներում քննարկումը, որպես սպառողների սպասարկման որակի ցուցանիշ, մշտապես վերահսկվում է հանձնաժողովի կողմից:

## **5. Էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի համաձայնեցում եւ գնումների մոնիթորինգ**

Հանձնաժողովի գործառույթներից իր կարելուրությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ եւ երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության եւ համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային

գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարելու է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար եւ օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ եւ ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման եւ վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի եւ բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում եւ համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաեւ ամփոփում նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները եւ հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

2018 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր են իրականացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «Երեւանի Ջերմաէլեկտրակենտրոն», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» եւ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները:

Իրականացվող ներդրումային ծրագրերն ուղղված են մի շարք խնդիրների լուծմանն ու կարգավորմանը: Մասնավորապես, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրականացումը կհանգեցնի շահագործման եւ պահպանման ծախսերի, կորուստների, ինչպես նաեւ հոսանքազրկումների քանակի եւ տեւողության կրճատմանը, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը նպատակաուղղված է գազափոխադրման եւ գազաբաշխման համակարգերում անխափան, հուսալի եւ անվտանգ գազամատակարարման ապահովմանը, ծառայությունների մատուցման ու սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրի իրագործումը կապահովի ՀԷԿ-երի աշխատանքի շարունակականությունը եւ անվտանգության ու հուսալիության մակարդակի բարձրացումը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է ընկերության բնականոն գործունեության ապահովմանը, իսկ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգում էլեկտրական էներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգում տվյալների հաղորդման ենթակառուցվածքների արդիականացմանը:

Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում էլեկտրական էներգիայի



եւ բնական գազի բաշխման գործունեությունը իրականացնող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ առաջնահերթություն տալով սպասարկման որակի ցուցանիշների առավել ցածր մակարդակ ունեցող հատվածներում ներդրումների իրականացմանը: Մասնավորապես, ներդրումային ծրագրերի համաձայնեցման գործընթացում առանձնակի ուշադրություն է դարձվում սպասարկման որակին առնչվող՝ սպառողներից ստացված դիմում-բողոքներին, ինչպես նաև հանձնաժողով ներկայացվող համապատասխան տեղեկատվությունում ներկայացված առավել վատ ցուցանիշներով հասցեներին, որոնք ներառվում են ընկերությունների ներդրումային ծրագրերում:

2018 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման եւ համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հաշվարկային կենտրոն», «Երեւանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների 2017 թվականի ներդրումային գործունեության արդյունքները, քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ», «Հաշվարկային կենտրոն» եւ «Երեւանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից համաձայնեցման ներկայացված ներդրումային ծրագրերը եւ ընդունվել են համապատասխան որոշումներ:

Հանձնաժողովը մշտապես հետեւում է նաև իր կարգավորման դաշտում գործող «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի եւ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես էլ ընկերությունների ինտերնետային կայքերում:

2018 թվականի ընթացքում հանձնաժողովը, համաձայն կարգավորվող անձանց գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կարիքներին համապատասխան ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների քանակի եւ ժամանակացույցի գնահատման նպատակով իրականացրել է նշված անձանց կողմից հրապարակվող գնումների պլանների

մոնիթորինգ, որի արդյունքները հրապարակվել են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում: Նույն ժամանակահատվածում իրականացվել է նաև կարգավորվող անձանց գնումների առանձին գործարքների մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի եւ մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը:

## **6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն**

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման եւ լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձեւավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

2018 թվականի ընթացքում էներգետիկայի բնագավառի եւ ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունները, «Վեոն Արմենիա», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունները հանձնաժողովի սահմանած ձեւերով եւ պարբերականությամբ ներկայացրել են ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս ֆինանսական վիճակի եւ գործունեության արդյունքների վերլուծություն:

Հաշվի առնելով, որ էլեկտրոնային համակարգերը լայն կիրառություն են ստանում գործարար ոլորտում եւ նկատարում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, հարմարավետությանն ու ժամանակի խնայողությանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ստեղծվել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային հարթակ՝ հանձնաժողովը լրամշակել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը, որով հնարավորություն է ընձեռվել կարգավորվող ընկերություններին լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները հանձնաժողով ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման եւ էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին եւ

ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով եւ ժամկետներում վճարումների կատարման գործընթացը վերահսկելու նպատակով հանձնաժողովն ամսական արդյունքներով ստացել, վերլուծել եւ ամփոփել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշվում դրամական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշվին մուտքագրվող գումարների գրավադրման ընթացքում վճարումների կատարման ընթացակարգն առավել արդյունավետ դարձնելու նպատակով լրանշակվել է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 10-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հաշվից վճարումներ կատարելու եւ երաշխիքային գումարն օգտագործելու կարգը, որի արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հնարավորություն է տրվել սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից հավաքագրված գումարների գրավադրման ընթացքում վճարումներ կատարել նաեւ ներքին շուկայում վաճառելու նպատակով այլ աղբյուրներից գնված էլեկտրական էներգիայի դիմաց:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի եւ ջրային ուղրոտի կարգավորվող ընկերությունների գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով ամփոփվել է հիշյալ ընկերությունների կողմից ներկայացվող տեխնիկատնտեսական տեղեկատվությունը եւ հրապարակվել հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

## **7. Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ**

2018 թվականի ընթացքում հանձնաժողովը, գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում եւ հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, աշխատանքներ է իրականացրել բնագավառում գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավման, մրցակցության խթանման, շարժական կապի ծառայությունների հասանելիության ապահովման, բաժանորդների իրավունքների եւ շահերի պաշտպանության, ինչպես նաեւ նոր տեխնոլոգիաների եւ ծառայությունների ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, կարելուովում են իրականացված հետեւյալ աշխատանքները.

1. ՀՀ տարածքում հանրային շարժական կապի ցանցերի զարգացման եւ ծածկույթների ընդլայնման գործընթացի շրջանակում, այդ թվում՝ հանձնաժողովի կողմից սահմանված լիցենզիոն պարտավորությունների հիման վրա, «ՎեՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական եւ «Յուրոմ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունները շարունակել են արդիականացնել իրենց հանրային շարժական կապի ցանցերն ու ծածկույթները:

Պետք է նշել, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ տարածքում առկա է 1003 բնակավայր (ներառված չէ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 32-ուն բնակչություն առկա չէ, սակայն դրանցից 29-ուն առկա է հանրային շարժական կապի ծածկույթ:

Հաշվի առնելով նշված հանգամանքը, կարելի է փաստել, որ հանրապետության բոլոր բնակավայրերն ապահովված են հանրային շարժական կապի 2G եւ 3G տեխնոլոգիաների ծածկույթով, իսկ բնակավայրերի գերակշռող մասն ապահովված է նաեւ 4G եւ 4G+ տեխնոլոգիաների ծածկույթով:

Մասնավորապես, ՀՀ բնակավայրերի 88%-ն (882 բնակավայր) ապահովված է հանրային շարժական կապի 4G+ տեխնոլոգիայի ծածկույթով:

Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման եւ տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

2. ՀՀ տարածքում հանրային ամրակցված հեռախոսակապի եւ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման եւ ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում Հայաստանի Հանրապետության 996 (99.3 տոկոս) բնակավայրում հասանելի են հանրային ամրակցված հեռախոսակապի անլար տեխնոլոգիաների ծառայությունները եւ 230 (23 տոկոս) բնակավայրում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի լարային տեխնոլոգիաների ծառայությունները:

Միաժամանակ, հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի հասանելիությամբ ապահովված են հանրապետության բոլոր բնակավայրերը (100 տոկոս), այդ թվում՝ 997 (99.4 տոկոս) բնակավայր անլար եւ 373 (37.2 տոկոս) բնակավայր՝ լարային տեխնոլոգիաների կիրառմամբ, մասնավորապես՝ Wi-Fi, Wi-Max, xDSL, FTTx, Ethernet:

2019 թվականի ընթացքում ամրակցված ցանցերի ենթակառուցվածքների ներդրմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն նաեւ հանրապետության այլ բնակավայրերում:

Ամփոփելով վերոնշյալը եւ հաշվի առնելով ՀՀ 1003 բնակավայրից հանրային շարժական կապի ծածկույթ չունեցող 3 եւ ամրակցված կապի ծածկույթ չունեցող 4 բնակավայրի չբնակեցված լինելու հանգամանքը՝ կարելի է փաստել, որ ներկայումս ՀՀ բոլոր բնակավայրերը ապահովված են հանրային շարժական կապի ծածկույթով, ինչպես նաեւ լարային եւ (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի եւ լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

3. Հաշվի առնելով ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի համապատասխան հրամանով ՀՀ հաճախականությունների բաշխումների

աղյուսակում կատարված փոփոխությունները, որոնց համաձայն՝ 811-821ՄՅց եւ 852-862ՄՅց, 1765-1785ՄՅց եւ 1860-1880ՄՅց ռադիոհաճախականությունների հատվածներն առանձնացվել են առեւտրային նպատակով տրամադրման համար, ՀՀ հանրային շարժական կապի ծառայությունների շուկայի առկա իրավիճակով պայմանավորված՝ հանձնաժողովը նախաձեռնել է ՀՀ հանրային շարժական կապի ցանցի երեք օպերատորների միջեւ կազմակերպվող մրցույթների միջոցով հանձնաժողովի տնօրինման տակ գտնվող 800ՄՅց եւ 1800ՄՅց ռադիոհաճախականությունների տիրույթի ազատ հատվածները տրամադրելու գործընթաց, որպես սկզբունք ընդունելով ռադիոհաճախականությունների հատվածների փուլային տրամադրման մրցույթների իրականացումը: Ռա հնարավորություն կընձեռի հանրային շարժական կապի օպերատորներին առավել արդյունավետ գնահատել հանրային շարժական կապի ծառայությունների շուկայի իրավիճակն ու նախատեսվող զարգացումները, ինչպես նաեւ ծրագրել իրենց հանրային շարժական կապի ցանցերի զարգացման ռազմավարությունները:

Հանձնաժողովի հաստատած մրցութային կանոնների համաձայն՝ մրցույթների միջոցով նշված ռադիոհաճախականությունների տիրույթների տրամադրմամբ կապահովվեն ոչ միայն ՀՀ պետական բյուջե լրացուցիչ մուտքեր, այլ նաեւ զգալի ներդրումների իրականացում՝ նպաստելով ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում մրցակցության խթանմանը, հանրային շարժական կապի 4G+/LTE-A տեխնոլոգիայի ցանցերի զարգացմանն ու դրանց փոխադարձ ներթափանցելիության ցուցանիշի բարձրացմանը՝ ապահովելով հանրային շարժական կապի նոր սերնդի տեխնոլոգիաների ենթակառուցվածքների հասանելիության բարձր ցուցանիշ՝ ՀՀ բնակավայրերում առնվազն մեկ շարժական կապի ցանցի 4G+/LTE-A տեխնոլոգիայի հիման վրա 100 տոկոս ծածկույթ:

4. 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործունեություն է իրականացնում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի 144 լիցենզավորված օպերատոր: Ընդ որում, 2018 թվականի ընթացքում լիցենզավորված թվով 32 օպերատորներից 28-ին տրամադրվել է ցանցի լիցենզիա՝ մարզային բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար:

5. «ՎեոՆ Արմենիա» ՓԲԸ-ի նկատմամբ հանձնաժողովի որոշմամբ սահմանված պարտավորությունների կատարման արդյունքում՝ 2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ ընկերությունը հանրապետության 40 մարզային բնակավայրերում ապահովել է լայնաշերտ ինտերնետ հասանելիություն՝ օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով:

6. Լրամշակվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզավորման, ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն-

ների տրամադրման, ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների կասեցման եւ դադարեցման կարգերը, ինչպես նաեւ համարի եւ կողի զբաղեցման թույլտվության հատկացման ու օգտագործման կանոնները՝ վարչարարության պարզեցման եւ հստակեցման նպատակով:


7. Արտակարգ իրավիճակներում կամ մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների պաշտպանության ապահովման օպերատիվ արձագանքման նպատակով տրամադրվող կողերի գործարկման եւ օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով լրամշակվել են հանձնաժողովի կողմից հաստատված՝ հատուկ ծառայությունների կամ ծառայության կողերի զբաղեցման կանոնները:

8. Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ կանոնակարգվել եւ ապահովվել է հեռախոսազանգի միջոցով մատուցվող հավելվածարով ծառայությունների սակագների վերաբերյալ մինչեւ հեռախոսակապի հաստատունը համապատասխան ձայնային հաղորդագրության միջոցով այդ ծառայություններից օգտվող բաժանորդներին անվճար տեղեկություններ տրամադրելու հնարավորությունը:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջեւ մրցակցությունը խթանելու եւ տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու սկզբունքների վրա հիմնված կարգավորման քաղաքականության իրականացման արդյունքում արձանագրվել են հետեւյալ զարգացումները.


- Տարեվերջին միջազգային «ԱՅՓԻ» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 502000 Մբիթ/վ:

Ստորեւ բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության 2012-2018 թվականների աճի դինամիկան.



- Մրցակցության արդյունքում միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է այդ ծառայության սակագինը: 2018 թվականի տարեվերջին 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի արժեքը կազմել է 1000 դրամ՝ 2017 թվականի տարեվերջի համեմատությամբ նվազելով շուրջ 29 տոկոսով:

Ստորել բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագների 2012-2018 թվականների նվազման դինամիկան՝ 1 Մբիթ/վ արագությամբ տարանցիկ «ԱՅՓԻ» հոսքի համար.




- Լայնաշերտ անրակցված ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում գերակշռել են օպտիկամանրաթելային FTTx օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը նշված շուկայում 2018 թվականին կազմել է շուրջ 55 տոկոս: Ընդ որում, 2017 թվականի համեմատ FTTx օգտվող բաժանորդների թվաքանակն աճել է շուրջ 18.4 տոկոսով: Միեւնույն ժամանակ, շուրջ 11.2 տոկոսով նվազել է լարային xDSL տեխնոլոգիայով ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների թվաքանակը:

- Մանրածախ շուկայում լայն տարածում են ստացել առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTH) վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկվում են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» եւ «Չորսը

մեկում (Quad Play)» ձեւաչափով՝ ներառելով ամրակցված կապի տեխնոլոգիայի հիման վրա մատուցվող հեռախոսակապը, ինտերնետ հասանելիությունը, «ԱՅՓԻ» հեռուստատեսությունը, ինչպես նաև շարժական բջջային հեռախոսակապը: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում (Triple Play)» ծառայությունների փաթեթով առաջարկվում են ինտերնետ հոսքի 20Մբ/վ-ից մինչև 100Մբ/վ արագություններ՝ 8500 դրամից մինչև 24000 դրամ սակագներով, իսկ «Չորսը մեկում (Quad Play)» ծառայությունների փաթեթով՝ 7990 դրամից մինչև 31500 դրամ սակագներով:

- Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների թիվը (այդ թվում՝ շարժական 3G/4G/4G+ եւ 2G) 2018 թվականին կազմել է 2893964, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 10.3 տոկոսով:
- Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թիվը (ներառյալ՝ շարժական 3G/4G/4G+) 2018 թվականին կազմել է 2586915, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների թվի 13.8 տոկոս աճ: Ստորել բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների թվի 2012-2018 թվականների աճի դինամիկան.




- Ավելացել են շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թիվը 2018



թվականին կազմել է 2239467, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների թվի աճ 14.4 տոկոսով:

Ստորև բերված է շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվի 2012-2018 թվականների աճի դինամիկան.



**8. Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության, թափանցիկության ապահովումը եւ համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների ու հասարակական կազմակերպությունների հետ**

Հանձնաժողովը, օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում, հրավիրված դռնբաց նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է կարգավորվող ընկերությունների համար: 2018 թվականի ընթացքում, հավատարիմ իր հրապարակային եւ թափանցիկ գործելաոճին, ինչպես նաեւ նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս ներգրավել հանրային ծառայությունների կարգավորման գործընթացում, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում յուրաքանչյուր շաբաթ հրապարակել է մանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ: 2018 թվականին հրավիրվել է հանձնաժողովի 93 նիստ եւ ընդունվել 778 որոշում:

Կարելի էրելով զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունը՝ հանձնաժողովը սահմանված ժամկետներում պարզաբանումներ է տրամադրել նրանց կողմից բարձրացված գրավոր եւ բանավոր հարցադրումներին: Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները մասնակցել են հանձնաժողովի

նիստերին եւ հանրային քննարկումներին, ինչը նպաստել է կարգավորող մարմնի գործունեության թափանցիկության, հրապարակայնության եւ սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը, որը պարբերաբար թարմացվում է, զանգվածային լրատվամիջոցներին, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին եւ ցանկացած շահագրգիռ անձի հնարավորություն է ընձեռում տեղեկանալ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացին, ծանոթանալ հանձնաժողովի գործունեությանը, ստանալ ծառայությունների սպասարկման որակի եւ սպառողների իրավունքների վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն:

Կարելիորելով սպառողների հետ աշխատանքը՝ հանձնաժողովը հանրային հնչեղություն ունեցող, մասնավորապես, սակագների ձեւավորման, դրանց հաշվարկման մեթոդիկաների, կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի եւ սպառողների իրավունքների պաշտպանությանն առնչվող այլ հարցերի շուրջ, սերտորեն համագործակցել է սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, ինչը եւս նպաստել է հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

2018 թվականի ընթացքում սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունները մասնակցել են հանձնաժողովի եւ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի կողմից համատեղ իրականացված մոնիթորինգի աշխատանքներին, որի նպատակն էր ստուգել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների հավաստիությունը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջին համապատասխան, ինչպես յուրաքանչյուր տարի, 2018 թվականին եւս, հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում եւ տպագիր մամուլում հրապարակել է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

Միաժամանակ, հանձնաժողովն իր հաջորդ տարվա գործունեության ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելու եւ ողջամիտ առաջարկությունները ծրագրում ներառելու նպատակով այն հրապարակել է իր պաշտոնական ինտերնետային կայքում եւ քննարկել հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերությունների եւ սպառողների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

Բացի այդ, վերը նշված ծրագրին համապատասխան՝ հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում եռամսյակային արդյունքներով հրապարակվել

է նաեւ 2018 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված եւ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

2018 թվականին հանձնաժողովի անդամները եւ աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների եւ սպառողների իրավունքների պաշտպանության մասին պարբերաբար հանդես են եկել ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով եւ հարցազրույցներով: Կատարվել է մանուլի հրապարակումների ամենօրյա վերլուծություն: Հանձնաժողովի եւ կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները ներկայացվել են հանձնաժողովի ստորաբաժանումներին՝ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների եւ հանրության կարծիքն ու գնահատականը:

### **9. Միջազգային համագործակցություն**

Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում իր իրավասությունների շրջանակում համագործակցել է Եվրասիական տնտեսական միության (Евразийский Экономический Союз – ЕЭС), Եվրոպական միության (European Union – EU), օտարերկրյա պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (Евразийская Экономическая Комиссия – ЕЭК), էներգետիկ համայնքի քարտուղարության (Energy Community Secretariat), Համաշխարհային բանկի (World Bank – WB), Ասիական զարգացման բանկի (Asian Development Bank – ADB), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (US Agency for International Development – USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (National Association of Regulatory Utility Commissioners – NARUC), էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (Energy Regulators Regional Association – ERRA), Առեւտրի համաշխարհային կազմակերպության (World Trade Organization – WTO), Հեռահաղորդակցության միջազգային միության (International Telecommunication Union – ITU), Կապի տարածաշրջանային համագործակցության (Региональное содружество в области связи – РСС), Արեւելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության կարգավորողների (Eastern Partnership Regulators' Network – EaPeReg), Ջրի միջազգային ասոցիացիայի (International Water Association – IWA), Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի (European Water Regulators – WAREG) եւ այլ կազմակերպությունների հետ:

Հանձնաժողովի ներկայացուցիչները 2018 թվականի ընթացքում մասնակցել են ՀՀ-ԵՍ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող «էներգետիկ համագործակցություն՝ ներառյալ միջուկային անվտանգությունը»,

«Էներգետիկա», «Սպառողների պաշտպանություն» եւ «Համագործակցություն տեղեկատվական հասարակության ոլորտում» գլուխների կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության կողմից կազմված միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզի) մշակման աշխատաքներին:

Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագրի շրջանակում հանձնաժողովը սահմանվել է որպես Հայաստանի Հանրապետության լիազորված մարմին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բնական մենաշնորհների կարգավորմանը վերաբերող հարցերում: Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ներկայացվել է տեղեկատվություն 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման համակարգի ու պրակտիկայի համեմատական վերլուծության, ինչպես նաեւ ամենամյա հաշվետվությունների ու զեկույցների նախապատրաստման համար՝ պայմանագրի 19-րդ բաժնի եւ 20-րդ հավելվածի՝ բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին արձանագրության պահանջներին համապատասխան:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային կից խորհրդատվական կոմիտեի շրջանակում անդամ պետությունների համատեղ քննարկումների եւ բանակցությունների արդյունքում կազմվել է բնական մենաշնորհների ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման համապատասխան միջոցառումների իրականացման հաջորդականության որոշման միջոցառումների պլանը (ճանապարհային քարտեզը) 2019-2021 թվականների համար, ինչպես նաեւ մշակվել է «Բնական մենաշնորհների ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման խնդիրները» թեմայով գիտահետազոտական աշխատանքի տեխնիկական առաջադրանքի նախագիծը:

Միաժամանակ, հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային կից բնական մենաշնորհների, էլեկտրաէներգետիկայի, գազի, նավթի եւ նավթամթերքների, սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական կոմիտեի, Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձեւավորման ենթակոմիտեի, Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման նպատակով ստեղծված աշխատանքային խմբերի եւ ենթախմբերի նիստերին ու խորհրդակցություններին:

2018 թվականին ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության

համակարգմամբ հանձնաժողովը մասնակցել է ՀՀ առևտրային քաղաքականության երկրորդ վերաքննության գործընթացի շրջանակում Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված ոլորտային հանդիպումներին եւ քննարկումներին, ինչպես նաեւ համապատասխան տեղեկատվության նախապատրաստման աշխատանքներին:

Հանձնաժողովը մասնակցել է Եվրոպական միության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորող մարմինների ցանցի աշխատանքներին: Մասնավորապես, 2018 թվականին հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են Եվրոպական միության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում կազմակերպված լիազույնար միստերին եւ ռադիոհաճախականության, համեմատական վերլուծության ու ռոունդթեյբի հարցերով փորձագետների խմբերի միստերին ու մի շարք սեմինարներին, որտեղ քննարկվել են էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ, ինչպես նաեւ ներկայացվել են հեռահաղորդակցության կարգավորման ոլորտում Եվրոհամայնքի անդամ պետությունների լավագույն փորձը եւ նորամուտությունները:

Հանձնաժողովի ներկայացուցիչները շարունակաբար մասնակցում են Եվրոպայի եւ Եվրասիայի էներգետիկայի բնագավառի կարգավորողների համար կիրառելի տեղեկատվության նախաձեռնության, ինչպես նաեւ բնական գազի ոլորտում գործընկերության շրջանակում ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի եւ ԱՄՆ միջազգային զարգացման գրասենյակի կողմից համատեղ կազմակերպված սեմինարներին:

Հանձնաժողովը, հանդիսանալով էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի հիմնադիր անդամ, ակտիվորեն մասնակցում է այդ կազմակերպության աշխատանքներին՝ ընդհանուր ժողովների, կարգավորող հանձնաժողովների նախագահների միստերի, լիցենզավորման եւ մրցակցության, սակագների եւ գնագոյացման կոմիտեների, ինչպես նաեւ սպառողների եւ մանրածախ շուկաների աշխատանքային խմբի միստերի շրջանակում, ինչպես նաեւ ասոցիացիայի անդամների միջեւ կարգավորմանը վերաբերող տեղեկատվության փոխանակման միջոցով:

Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի շրջանակում տարվում են ծավալուն աշխատանքներ ջրամատակարարման եւ ջրահեռացման բնագավառում բազմաթիվ խնդիրների լուծման, Եվրոպական միության համապատասխան դիրեկտիվների փոփոխման գործընթացում մասնակցության, կարգավորող մարմինների միջեւ փորձի փոխանակման, ինչպես նաեւ առանձին կարգավորող մարմիններին խորհրդատվական եւ տեղեկատվական օժանդակության ուղղությամբ:

2007 թվականից շարունակվում է համագործակցությունը հանձնաժողովի եւ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի միջեւ: Մասնավորապես, իրականացվել են 2018 թվականի համատեղ աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները՝ տեխնիկական եւ խորհրդատվական աջակցություն տրամդրելու ուղղությամբ:

Հանձնաժողովի միջազգային համագործակցությունը միտված է աստիճանական հետեւողական ներգրավմանը տարբեր տարածաշրջանային կառույցներում՝ համաաշխարհային տնտեսությանը Հայաստանի Հանրապետության տնտեսության ինտեգրման գործընթացում առանցքային նշանակություն ունեցող ենթակառուցվածքային ոլորտի կարգավորումը միջազգային լավագույն պրակտիկային համապատասխանեցման եւ օրենսդրության մոտարկման նպատակով:

Միաժամանակ, այդ համագործակցությունը նպաստում է հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական ունակությունների եւ հմտությունների կատարելագործմանը, կարգավորման ավելի նորարարական մոտեցումների մշակմանը եւ ներդրմանը, ինչպես նաեւ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությանը:

## **10. Հանձնաժողովի կողմից բյուջետային մուտքերի ապահովումը**

Հանձնաժողովի տարեկան բյուջեն ձեւավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումներին համապատասխան: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձեւավորվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձեւավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1,75 գործակցով, ինչը 2018 թվականի հաստատված պետական բյուջեով կազմել է 810,4 մլն դրամ, որից փաստացի ծախսվել է 770,0 մլն դրամը, իսկ տարբերությունը՝ 40,4 մլն դրամի չափով վերադարձվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Հանձնաժողովի բյուջետային մուտքերը ձեւավորվում են հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող եւ ծառայություն մատուցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներից: Կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման եւ վճարման հետ կապված հարաբերությունները, վճարողների շրջանակը եւ վճարման կարգը սահմանված են

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հետեւաբար, հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման եւ դրանց ծախսման հետ կապված հարաբերությունները բյուջետային մուտքերի եւ ելքերի մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի վրա թողնում են չեզոք ազդեցություն:

Հարկ է նշել, որ հանրային ծառայությունների ոլորտի կարգավորող մարմնի անկախության եւ վարչական իրավազորության ամրապնդման հանձնառությունը Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական Միության եւ Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջեւ կնքված համապարփակ եւ ընդլայնված գործընկերության» համաձայնագրով (CEPA):

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովել են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման եւ օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին» եւ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում կիրառվող տուգանքների, ինչպես նաեւ նոր էլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների մասով: 2018 թվականին նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվել է շուրջ 7,4 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ 6,1 մլրդ դրամը կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման եւ թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: